

գ) Վերևսսան եկեղեցիին մեջ հրաշքի մը առանդու-
 քիւնը. — Ճառընտիրներու մէջ կը գտնուի Երուսա-
 ղէմէն Արծրունեաց Գրիգոր եպիսկոպոսէն Հայոց դըր-
 ուած նամակի մը օրինակը, որուն համաձայն կը հաս-
 կընանք թէ Յուստինիանոս կայսր կ'ուզէր փոխել
 Տեառնընդառաջի տօնին թուականը: Հայրապետն ու
 ժողովուրդը ընդդիմացան այս փոփոխութեան. կայ-
 սեր ներկայացուցիչը բռնութեամբ դործադրել ուզեց
 այս որոշումը: Վերոյիշեալ նամակին մէջ այս առթիւ
 կը պատմուի հետեւեալ աւանդութիւնը. երբ պետա-
 կան պաշտօնեաները և ժողովուրդը իրար անցած էին,
 Սիոնի եկեղեցիին մէջ նշան մը երևցաւ, եւ «Քրիս-
 տոսազարդ սիւնէն ջուր բղխեցաւ վերուստ ի վայր».
 պաշտօնեաները եւ ժողովուրդը իմացան եւ հոն հա-
 լաքուեցան տեսնելու այս հրաշալիքը: Նոյն ջրով ա-
 մէնքն ալ լուացուեցան և օրհնեցին զԱստուած: Կայ-
 սեր ներկայացուցիչը եւ զինուորներն ալ Ս. Սիւնին
 առջև խոնարհեցան և մեղաց թողութիւն խնդրեցին,
 ու ժողովուրդը Տեառնընդառաջի տօնը կը կատարէ
 ըստ Յայտնութեան (Տար. 2. էջ 485, նոյնը 2. էջ 88):

ե) Հայոց Ս. Փրկչայ վանքը. — Աննա քահանայա-
 պետին տունէն Յիսուս տարուեցաւ Կայիափայի տունը

զամ կը յիշատակէ Սիոնի սացութիւնը: Առաջինով երկու եղբայր-
 ներն են որ զնումը կը կատարեն, երկրորդով Յովհաննէսն է միակ ըս-
 տացողը: Սիոնը կը ներկայանայ հոս Երուսաղէմի ամենէն բարձր տե-
 ղը: Այն ասեմ քահանայապետները ամէն տարի կը փոխուէին եւ կ'ըն-
 տուէին տարբեր զաւառներէ, Կայիափան հետեւաբար օտարական մ'էր
 եւ Երուսաղէմի մէջ բնակարան չուներ: Յովհաննէս տուա իր տունը
 ուր ան կը բնակէր: Ընդարձակ բացատրութեանց համար տեսել D.
 Ar. (էջ 2103-2104):